

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0114.04.5 «ՊԱՐԻ ՌԻՍՈՒՑՈՒՄ»**

**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

<b>Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը</b>	0114.04.01.5 «Պարուսույց»
<b>I. Դերը</b>	«Պարուսույց» որակավորմամբ մասնագետը նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում, արվեստի դպրոցներում, մշակույթային կրթօջախներում, ինքնագործ խմբերում իրականացնում է պարի ուսուցում (հայկական պարի, տարբեր ազգերի պարերի, դասական պարի հիմունքների, ժամանակակից պարերի էլեմենտների ուսուցանում և դասի կառուցում, երաժշտական նյութի ընտրություն և պարի բեմադրություն):
<b>II. Խնդիրների բնագավառները</b>	
<b>Խնդիրների բնագավառ 1. Դասի պլանավորում և կառուցում</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Կատարում է դասի բաժինների արդյունավետ տեղաբաշխում ժամանակի մեջ, շարժումների հերթականության ուսուցում և երաժշտական նյութի ընտրություն:
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ և արդյունավետ է բաշխում դասի վարման ընթացքը,</li> <li>2) ճիշտ է պլանավորում էլեմենտների ուսուցման հերթականությունը,</li> <li>3) ճիշտ է կատարում երաժշտական նյութի ընտրությունը:</li> </ol>
<b>Խնդիրների բնագավառ 2. Պարային էլեմենտների ուսուցանում և ներդաշնակ կապակցում</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Սովորեցնում է գլխի, իրանի, ձեռքերի, ոտքերի շարժումների ճիշտ և ներդաշնակ համակցում, էլեմենտների կատարման տեխնիկան և արտահայտչականությունը, տերմինալոգիան, երաժշտական և մեթոդական առանձնահատկությունները, վարժությունների կառուցումը և համադրումը երաժշտության հետ:
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) մեթոդապես ճիշտ է բացատրում , ցուցադրում և շտկում պարային էլեմենտները և շարժումները,</li> <li>2) ճիշտ և ներդաշնակ է համադրում վարժությունը երաժշտության հետ,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում շարժման և վարժությունների կատարման առանձնահատկությունները և արտահայտչականությունը:</li> </ol>
<b>Խնդիրների բնագավառ 3. Երաժշտական նյութի ընտրություն և պարի բեմադրություն</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Կատարում է երաժշտական նյութի ընտրություն, որի հիման վրա կառուցում է պարային էտյուդներ, սյուլժետային և ոչ սյուլժետային համարներ:
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է կատարում երաժշտական նյութի ընտրությունը,</li> <li>2) ճիշտ է համադրում շարժումը երաժշտության հետ,</li> <li>3) ճիշտ է կառուցում պարը (սկիզբ, զարգացում, ավարտ),</li> <li>4) ճիշտ է կառուցում պարի նկարագիրը,</li> <li>5) ներդաշնակ է կապակցում շարժումներն ու անցումները,</li> <li>6) ճիշտ և բնորոշ են ընտրված շարժումները ըստ համապատասխան նյութի,</li> <li>7) ճիշտ է կառուցում սյուլժեն սյուլժետային համարներում:</li> </ol>

<b>III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/</b>	Պատասխանատու է մասնագիտական գիտելիքների և կարողությունների ճիշտ փոխանցման, անձի առողջությանը չվնասելու, ըստ սահմանված ժամկետի ծրագրի կատարման և որակի ապահովման համար:
<b>IV. Լեզուները</b>	հայերեն - լավ երկու օտար լեզու – բավարար (որակավորման պահանջներին համապատասխան)
<b>V. Համակարգիչը</b>	- MS Word - Internet
<b>VI. Գիտելիքները</b>	Պետք է. 1. տիրապետի պարային հիմնական գիտելիքներին (դասական պար և դասավանդման մեթոդիկա, հայկական պար և դասավանդման մեթոդիկա, ժողբևորոշ պար և դասավանդման մեթոդիկա, ժամանակակից պար և դասավանդման մեթոդիկա), 2. լիարժեք տիրապետի մասնագիտական տերմինաբանությանը, 3. տիրապետի բալետմայստերական և խորեոգրաֆիկ հմտություններին, 4. տիրապետի երաժշտական հիմնական գիտելիքներին, 5. տիրապետի մանկավարժության և հոգեբանության հիմունքներին:
<b>VII. Կարողությունները և հմտությունները</b>	Կարող է. 1. հմտորեն կառուցել դասը և կազմակերպել դասապրոցերը, 2. բացատրել և ցուցադրել պարային շարժումները, 3. ցուցաբերել յուրաքանչյուրի հանդեպ անհատական մոտեցում , 4. երաժշտությունը վերարտադրել շարժումների միջոցով:
<b>VIII. Անձի որակական հատկանիշներ</b>	Պետք է ունենա աշխատասիրություն, նվիրվածություն, կարգապահություն, ազնվություն, պատասխանատվություն, ինքնապահանջկոտություն, ստեղծագործական կատարելագործման և նորարարության ձգտում, կոլեգիալ հարաբերությունների ճկունություն: Լինի մտածող, պարկեշտ, անկաշկանդ, հաղորդակցվող, մաքրասեր, հարգալից, նորարար, ընկերասեր: